ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

**«---» մարտի 2012 թ.** **N-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6 հանրակացարանի հ.3ա՝ 75.7քմ ընդհանուր մակերեսով բնակարանը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 25.10.2010թ. հ.2660164 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Նշան Վարդանյանին, Համեստ Գրիգորյանին, Ռիմա Վարդանյանին, Ռիտա Վարդանյանին, Դավիթ Վարդանյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6 հանրակացարանի հ.3ա՝ 75.7քմ ընդհանուր մակերեսով բնակարանը 1996 թվականին «Երուղևորտրանս» ԼԿՊԶ-ի կողմից հատկացվել է Նշան Վարդանյանի ընտանիքին, սակայն կազմակերպության լուծարվելու պատճառով բնակարանի օրդերը և մի շարք փաստաթղթեր չեն պահպանվել։

Համաձայն Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.12.2010թ. թիվ ԵԱԴԴ/0801/02/10 վճռում նշված տեղեկատվության՝ Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6 հանրակացարանի հ.3ա բնակարանի նկատմամբ Նշան Վարդանյանն օգտագործման իր իրավունքը հաստատող փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով 14.05.2010թ. դիմել է Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի Երևանի քաղաքային մասնաճյուղ։ Ի պատասխան հայտնվել է, որ Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6 հանրակացարանի հ.3ա բնակարանը վերջինիս հատկացնելու վերաբերյալ տեղեկություն չի հայտնաբերվել։

Ներկայումս Նշան Վարդանյանն ընտանիքի հինգ անդամներով հաշվառված բնակվում է նշված բնակարանում, սակայն հատկացման փաստաթղթերի բացակայության պատճառով բնակարանը մասնավորեցնելու հնարավորություն չի ունեցել։

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի համաձայն Երևան համայնքի ավագանին որոշում է ընդունում համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման կարգի, ինչպես նաև օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ։

Ստեղծված իրավիճակում Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6 հանրակացարանի հ.3ա հասցեում գտնվող բնակարանը սեփականության իրավունքով Նշան Վարդանյանին և իր ընտանիքին անհատույց օտարելու /նվիրելու/ համար անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում, որով կլուծվի այս ընտանիքի բնակարանային խնդիրը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ առաջանում է «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևանի քաղաքապետի որոշում կայացնելու անհրաժեշտություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ